

ՀԱՅՐԵՆԻՔ

Գ Ա Ւ Ա Ռ Ա Կ Ա Ն

Լ Ր Ա Գ Ի Ր

Ամեն ԵՐԵՎԱՆԻ օրերը կը հրատարակուի: Պոստը համար 50 բուրգ գինն է 2 արծաթ Մեծիս կանխիկ: քրքատարութեան ծախքը բաժանորդաց վրայ: Իսկ գաւառաց համար 2 1/2 արծաթ Մեծիս: Մանուցման տողը 2 գրչ:

Գաւառաց քրքատարի ծախքը բաժանորդաց չ'վերաբերիր: Լրագրոյս վերաբերելու որ եւ է գրութիւն ուղղելի առ Տնօրէն-խմբագիր Մ. Յ. Մեխիթեան ի կ. Պոստը Զինվարի խան վերնա-յարկ քիւ 10:

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏԲԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Տիվրիկի առաջնորդական խորհրդի մասին երկու կուսակցութեան կողմանէ խելմը դրուելուն երկու կողմէն մեզ:

Տեղւոյն առաջնորդը և Ազգային ժողովները բողոք կը բառնան Հայրանեան կարգապետ Եփէնտիի դէմ, իբր թէ սա ազգային դործոց մէջ միասնաբար վարուելով տեղական կառավարութեան մէջ ստացած ազդեցութեան շնորհիւ վարժարանաց յառաջդիմութեան և ազգային իրաւանց պաշտպանութեան համար այլ և այլ արգելքներ կը յարուցանէ:

Իսկ Հայրանեան կուսակցութիւնը դառնապէս կը դանդաղի Տիվրիկի առաջնորդ արժ. Թէոդորոս վարդապետի և նորա համախոհ ժողովականաց դէմ, իբր թէ առաջնորդը ապօրինի ամուսնութեան հրամանի կուտայ և մինչև իսկ պատկեր կը լուծէ. սակէ զատ Ազգ. Պատրիարքարանէն քննիչ խրկուած արժ. Պօղոս վարդապետի չանսարով, զայն Տիվրիկէն Սեբաստիա խրկելու պատճառ եղած է:

Երկու կողմի գրութեանց մէջ ալ չափազանցութիւններ և մինչև իսկ առաջնորդական և քննիչ վարդապետի պատուոյն դէմ աննկերելի յարձակումներ տեսնելով, սոյն դրութեանց հրատարակութիւնը խոհեմութիւն չը համարեցինք մենք, սպասելով Ազգ. վարչութեան այս մասին տակի բացատրութեանց, զոր մօտ օրէն Ազգ. ժողովոյ պիտի մատուցանէ:

Հետեւաբար Տիվրիկի երկու կուսակցութեան յարեալ ազգայնոց կը մնայ օրինաց դործադրութեան նախանձով առ այժմ համբերել, մինչև որ Ազգ. վարչութիւնը հարկ եղած բացատրութիւնը ներկայացնէ: Ամեն ազգային իրաւունք ունի ճշմարտութիւն և օրինաւորութիւն պահանջել և ազգային իրաւանց դործադրութիւն խնդրել. բայց ամէն ազգային ալ պարտաւոր է ամենայն հըրձեամբ օրինաց հպատակելու և վարչութեան հրամանաց դէմ բռնութեամբ չը գտնուելու, որքան ալ ծանրը ըլլան, բաւական է որ ուղիղ և արդար են: Առանց այս պարտաւորութեան կատարման իրաւունքն ինքնին կը կորսուի և կը ջնջուի:

Մեր այս ըսածները Տիվրիկի ազգայինը շատ լաւ կը հասկընան, եթէ կերպն ու ատելութիւնը պահ մը մէկդի թողլով, լրջութեամբ մտա-

ծեն և Տիվրիկի երկրին քայքայումը իրենք իրենց ձեռքը կնքելու պատճառ չըլլան:

— Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր առաջարկութեանց Յանձնաժողովը Ազգային ժողովէն յանձնարարեալ խնդիրները ուշի ուշով քննելով ամէնուն վերջնական որոշումները սուռա և իր պաշտօնը համաձայնութեամբ աւարտեց:

Այս որոշեալ խնդրոց մէջ առաջին կրնան համարուել Սոյ և Ազգ. թամարայ կաթողիկոսական խնդիրները, որոնք միւս խնդրոց հետ Ազգային ժողովոյ ուրբաթ աւուր նըստին պիտի ներկայացուին:

— Ամեն Ս. Պատրիարք Հայրը հինգշաբթի օր Բերայի դերեզմանատան խնդրոյն համար զինուորական դործոց վեմ: պաշտօնէին երթալով անձամբ, գերեզմանատան խնդրոյն վրայ երկար տեսակցութիւն մ'ունեցաւ և պատասխան ստացաւ թէ սոյն խնդրոյն վերաբերեալ թուղթերն ամբողջ պատրաստուած ըլլալով, նոյն օրը Բարձր Մեծ Եպարքոսին պիտի ներկայացնէ:

— Գումգափուի Մայր Եկեղեցւոյ Թաղ. խորհրդոյ և Հոգարարձութեան մէջ վարժարանին նկատմամբ ծագած անհամաձայնութիւնը քննելու համար Գաղ. ժողովը ուրբաթ օր 5 հոգիէ բաղկացեալ յանձնաժողով մը կարգեց:

Սոյն յանձնաժողովը որուն մէջ արդարաւոր ձեռնիք պակաս չեն, տարակոյս չունիմք որ խնդիրն ի հիմանց պիտի քննէ և Մայր վարժարանի պէս համարաւոր դպրոց մը որ այս օրերս ցաւալի և դժգոհութեանց առիթ տուող կացութեան մը մէջ կը գտնուի, բարեկարգութեան վիճակին վերածելու արգելք եղող պատճառները և անձերը վերացնելով, թաղին զաւակաց դործնական բարիք մը պիտի ընէ:

Յանձնաժողովը առաջին անգամ վաղը Գումգափու պիտի գումարի:

— Գոհութեամբ լսեցինք որ Հինքեար պէյէնտեան Արժ. Տ. Յովհաննէս բանիբուն քահանան Նուպարճահալբեան վարժարանին տեսուչ կարգուեր է:

Տ. Յովհաննէս քահանայի այս մասին ունեցած կատարեալ արժանաւորութիւնը, ինչպէս նաև նորա տաղանդաւոր բարեմասնութիւնները և ազգային շատ պաշտօններու մէջ ունեցած արդիւնավոր վաստակը ըստ ամենայնի իրաւունք կուտան մեզ հաւատարմութեամբ ճանաչող որ ճահնապարհան վարժա-

րանը աւելի մեծ և զգալի արդիւնքներ պիտի ցուցնէ հասարակութեան և երջանկայիշատակ վարդապետի մը յօրուտ ազգային եկեղեցւոյ հիմնած կտակը բարեխղճութեամբ դործադրուելով, Ազգին մէջ օգտակար և արժանաւոր եկեղեցականները շատցնելու վառարան մը պիտի ըլլայ, զոր անուշա իրեն մեծ և առաջին պարտաւորութիւն համարած է Տ. Յովհաննէս բաղմարդիւն քահանան:

— Ի խնդրոյ Թէքլիտաղի դաւառական ժողովոյ, Ազգ. վարչութիւնը առաջնորդական ընտրելեաց հետեւեալ ցանկը խրկեր է:

- Տ. Խորմեան Սրբազան
- Տ. Կարապետ Եպիսկոպոս
- Տ. Արիստակէս վարդապետ Տ. Սարգիսեան:

— Ըստ յանձնարարութեան Բ. Գրան, Ս. Պատրիարք Հօր յատուկ շրջաբերականաւ կիրակի օր մայրաքաղաքին բոլոր եկեղեցեաց մէջ բարեբանական աղօթքներ կարդացուեցան Օգոստոսի առ Սուրբանին կենաց երկարութեանն ու բարօրութեան և աշխարհի խաղաղութեան համար:

— Խարբերիչ առաջնորդական Տեղապահ դեր. Տ. Սարգիս վարդապետ յառաջիկայ շաբթու իւր պաշտօնատեղին կուղևորի:

— Երուսաղէմայ ընկի միտրաններն արժ. Տ. Մովսէս վարդապետ որ տեղւոյն մէջ թարգմանիչ պաշտօն կը վարէր, այս օրերս մայրաքաղաքս եկած է:

— Պատրիարքական փոխանորդ դեր. Տ. Մկրտան ի դիմաց ամեն Ս. Պատրիարք Հօր շաբաթ օր Ամասիայի նորընտիր կառավարիչ վեմ: Ֆէյզի պէյի այցելութեան երթալով, մեծարանք ընդունուեցաւ:

Վեմ: Ֆէյզի պէյ հետեւեալ օր կիրակի Ս. Պատրիարք Հօր փոխադարձ այցելութիւն դալու փախագայտնած, սակայն Ս. Պատրիարք Հայրը անձնական տկարութեան պատճառաւ նոյն օրը Պատրիարքարանէն բացակայ մնալու պարտաւորեալ ըլլալով, այցելութիւնն ուրիշ աւուր թողուցեր է:

Ֆէյզի պէյի բարեօրութիւնը և արդարաւորութիւնը շատերուն ինչպէս և մեզ ծանօթ ըլլալով, տարակոյս չունիմք որ Ամասիոյ երկրին օգտակար և հասարակութեան յարգելի ու սիրելի պիտի ըլլայ:

— Սղերթէն հաղորդուած են մեզ հետեւեալ տեղեկութիւնք, որ Սղերթի

ժողովրդեան ցաւալի վիճակին նկարագրութիւն մ'ըլլալէ զատ, դառնապէս բողոք մ'է ընդդէմ Խարչանու դաւառին հարստահարիչ Ֆէթապէյի, որ տեղւոյն ժողովրդեան ընչից և պատուոյն բազմադիմի վնասներ կը հասցնէ եղբր հակառակ Օսմ. կայսրութեան առատագութ վեհապետին արդարաւոր կամաց և բարեխնամ կառավարութեան անդուլ ջանից և հոգածութեանց:

« Սղերթի երկրը գեղեցիկ է, բերրի և վայելուչ. 1500էն աւելի հայազգի բնակիչ ունի. ժողովրդը կ'օթը ութ մասի կը բաժնուի, Հայ Բիւրտ, Եէհուտի, Կիլտանի, Նեստորական, Բողքական և Արեւորդի (Եզիտի), որոց առաջին մասը հայ, երկրորդ քիւրտ, երրորդ Եէհուտի, չորրորդ նեստորական, հինգերորդ բողքական, վեցերորդ Կիլտանի, եօթներորդ արեւորդի են: Բողքականք խիստ քիչ են, 10—12 տուն Սղերթի մէջ, 7—8 տուն Աղձնեաց դաւառի Ռեալվան գիւղաքաղաքի մէջ կը գտնուի:

« Այս երկրի ժողովրդը առ հասարակ երկու լեզու կը գործածէ. առաջին քիւրտերէն, երկրորդ արաբերէն. հայ լեզուն գրեթէ ջնջուած և անհետացած է. ցաւ է ըսել որ Պօլսոյ Ազգ. վարչութիւնը թէ' իւր հայրենի երկրին ընտիր մասը և թէ' անոր մէջ բնակող հայ հասարակութիւնը խալաւ մոռացած' իւր ուշադրութիւնը Պօլսոյ շրջանակէն դուրս չեցնէր... »

« Երուսի թէ անոնք որ Պօլսոյ մէջ թուր կը շողացնեն, երկու ամիս Սղերթի մոռացեալ ժողովրդեան կառավարութեան ղեկը ձեռք առնելով, կառավարելին. գողգոթան այս լեռնոտ երկրի մէջն է. աւարայրի դաշտէն աւելի անմեղ հայոց արիւնք կը թափուի հաճի Ֆէթապէյի, իւր եղբոր Պէտէրլան պէյի և իւր 15էն աւելի որդւոց և ազգականաց ձեռք. Խարչանու երկրի ժողովուրդը եղեռնագործի ձեռքը հարաւային Ամերիկայի ժողովուրդէն երեք աստիճան թշուառ է. Ամերիկայի բռնաւոր կառուածատէրը իւր կրեց արիւն թափելու չէր արտօքը զինքն անասունի պէս դործածելու համար. Ֆէթապէյ ո'չ ոքի կենաց, ընչից պատուոյն և կրօնից չը խնայեր. քանի տարի առաջ քանիցս թէ քիւրտերէն և թէ քրիստոնեայնեան մինչև ի Բ. Գումգափու բողոքեցին. բայց արդիւնք մը չը տեսնուեցաւ տակաւին. այժմ դարձեալ բողոքնին կըրկնեցին առ Տիգրանակերտ եղող բա-

բերորտ քննիչ Սամի պէյ :

կայսերական բարեխնամ կառավարութիւնը ամեն ատեն պատրաստ է հարստահարեալ ժողովրդեան ցաւերը լսելու և դարման տանելու , ասոր վերջերքը շատ են և բազմաթիւ . ուստի Սղերթի հասարակութիւնը երբէք դադարելու չէ այդպիսի հարստահարչի մը դէմ բողոքել , այն վստահութեամբ թէ վեհ . Սուրբանին կամայք և կառավարութեան օրինաց , դէմ մեղանշող ամեն կարգի անձինք և մինչև իսկ բարձրաստիճան պաշտօնատարը վաղ կամ անագան իրենց արժանաւոր պատիւը կընդունին :

— Սերաստիպէն հետեւեալ կարևոր տեղեկութիւնները տրուած են մեզ .

« Սերաստիպէն աղբայնոց նման ուսման եռանդ ունեցող անձինք շատ քիչ կը գտնուին ի դաւառս . ասոնք ունին երեք դպրոց մասնաւոր շէնքով , որոց մէջ հազարի չափ տղայ կը դաստիարակուին տեսակ տեսակ ուսմամբ . հասարակ ընթերցանութիւնն ալ զատ . ունին երկու ալ աղջկանց դպրոց բարեկարգ և յառաջադէմ , մէկ դպրոցին վարի յարկը թատրերգութեան տեղի ըրած են , ուր բաւական սրտառուչ ոգեբերութիւններ կը ներկայացուին , ինչպէս են Արշակ Բ . Գրախտ կորուսեալ , Քաջն Վարդան և Գեորգեան քահանայք , ժողովրդային այս շարժումները կը յուսացուի որ պապային մեծամեծ օգուտներ առաջ պիտի բերեն եթէ յարատեւն և ուրիշ դաւառաբընակ ազգայնոց բարի օրինակ կըրնան ըլլալ :

« Ժողովրդեան այսպիսի հայրենասիրական եռանդ ու բողոք արժարձողն է գլխաւորապէս գեր . Առաջնորդը որ միշտ եկեղեցեաց ատեանները ազդու ատենախօսութիւններ ընելով , ժողովրդեան սրտերը կը վառէ , որով զգացած են ամենքն իրենց բարոյական և նիւթական օգուտները և սկսած են քայլ մը առաջ կընթանալ . ժողովրդոց շատերուն բերնէն լսուած է սա խօսքը . « երանի թէ սոյն քաջալերական յորդորները ասկէ 20 տարի առաջ լսած ըլլայինք , որով հիմա աւելի մեծ արդիւնքներ ձեռք բերած կըլլայինք » : Այս ըսելով ափսոս և եղճկ կը կարգան իրենց անցեալ ժամանակին :

« Արդարութեան պարտք մ'է խոստովանել թէ տեղւոյ Առաջնորդը ժողովրդեան համար կաշխատի սահմանադրապէս կազմեալ ժողովոց նախագահելով : Ասոր հետ մեծ թաղականաց , Ուսուսման , խորհրդոց և Հոգաբարձուաց աշխատութիւնն ալ գովելի է , որոնք Ազգին յառաջադիմութեան համար անձնուիրաբար կաշխատին գիշեր և ցերեկ :

« Մաղթենք որ Սերաստիպ այս յառաջադիմութեան մէջ յարատեւ և ապագային մեծամեծ արդիւնաւորի » :

Երզնկայէն հետեւեալ կերպով կը գրեն մեզ , որ եթէ ստոյգ է , երզնկայի մէջ խաղաղութեան վերահաստատուելը առ այժմ տարակուսելի կը թուի :

« Տեղւոյ առաջնորդը բռնի Պօլիս մեկնելէն ի վեր , հոս խաղաղութիւնն աւելի շիտակեցաւ և ժողովրդեան ցաւերն աւելի բազմացան :

« Նախ Ս . Նշան եկեղեցւոյ քահանաներէն կիւմիւշխանէյի Տ . Պետրոս քահանան յունվար 25 կիրակի օր Ս . Պ . տարագրելով , Հաւատամքի ժամանակ պատարագի զգեստով բեմին դարող մը տուաւ , որուն վրայ ողբ զայրացան . իսկ հակառակակաճք ուրախացան , « ահաւալ , ըսաւ , իսրայէլացւոց փարաւուսի ձեռքէն կրած ցաւերը տեսնելով » : Աստուած և խղճարով նոցա վրայ , « Մովսէս մը ուղարկեց . այնպէս ալ Երզնկայի վիճակը և ժողովրդեան առաջնորդին ձեռքէն կրած վիշակները տեսնելով Աստուած , օգնութեան « հասաւ , վերցուց փարաւոսը . ուստի « ամէնքս ալ շնորհակալ ըլլալու եմք Աստուծոյ , որ զմեզ դերութիւնէ ազատեց » :

« Այս խօսքերը չամաչելով , յայտարարեց առանց ըսելու թէ ո՞վ է այդ նոր Մովսէսը . անշուշտ ինքզինքն ըսել կուզէր , բայց վախցաւ հրապարակաւ խոստովանելէ :

« Տ . Մովսէս որ կղերական մ'է և Աւետարանի պաշտօնեայ , այս խօսքերով ո՞չ թէ զԱլեքսանտրեան անուանարկեց , այլ Երզնկայի խառնութիւնն արժարձեց . վստի զի Ալեքսանտրեան Պատրիարքարանի առջև տակաւին առաջնորդ է և ըստ օրինի պէտք էր շարունակուի նորայիշատակութիւնը եկեղեցեաց մէջ : Տ . Մովսէս պարտաւոր էր Ազգ . Պատրիարքարանը յարգելու որ իւր տէրն է և իշխանը , պարտաւոր էր կուռնի խաղաղութեանն աշխատելու , պարտաւոր էր սէր և խաղաղութիւն , միութիւն և ընկերասիրութիւն քարոզելու , եկեղեցւոյ բեմը իւր կրօնք և յարձակմանց խաղաղիկ չընելով : Տ . Մովսէս աւելի աղէկ կընէր եթէ իր անցելոյն վրայ ակնարկ մը ձգէր և ժողովրդեան վրայ պատճառած գայթակղութիւնը բառնալու աշխատէր , ինչպէս պարտք և օրէնք է պարկեշտ և պատուաւոր անձանց համար , Հոս չեմք ուղեր լինուի մը սերի դաղտնիքը յայտնել , որ ոչ նուաղ պատիւ կը բերէ Տ . Խ . քահանային ... »

« Ալեքսանտրեանի մեկնած օրը միւս երկու եկեղեցիներն ալ մի և նոյն հանգէսը ըրին . այն օրը պատեքի օր մ'էր իրենց համար : իսկ ժողովականք անմիջապէս ժողովներ կազմեցին , գիւղերը տոմսակներ խրկեցին յունվար 27ին ընդհանուր ժողով հրաւիրելու համար , ըսելով թէ Առաջնորդը հրաժարեալ է (ամիս մը առաջ ալ գիւղացւոց կը յայտարարէին թէ Առաջնորդ և ժողով մի՛ ճանչնաք բնաւ) թէ նորա տեղ տեղապահ կարգուած է Տ . Յարութիւն քահանայ որ Առաջնորդին դէմ ըմբոստ գտնուողներուն պարագլուխն էր և թէ այսուհետև զայն ճանչնաք և պատիի հրամանն անկէ առնուք : Գիւղացիք այս հրամանին չը ըսեցին և իրաւունք ունէին , վստի զի առաջին անգամ ժողովները մի՛ ճանչնաք կընէին . Բ . գիւղացին կը սիրէր իւր Առաջնորդը , զի եթէ գլխուն արկած մը գար , նա կը պաշտպանէր . Գ . անոնք լաւ համոզուած էին որ եթէ Առաջնորդն հրաժարի , իրենց իրաւունքները ոտնակոխ պիտի ըլլային , ինչպէս ալ եղաւ Առաջնորդի մեկնելէն վերջը :

« Մակ գիւղի մէջ խեղճ կին մը

տաճիկներէ բռնաբարուած և գլուխն ալ պատռած ըլլալով , խեղճ գիւղացին նոր ժողովոյ բողոք կը բառնայ , բայց ըող չըլլար : Գարձեալ յիշեալ գիւղի և Ազգին գիւղի մէջ հարսիք մը պատահելով , հարսն ու փեսան ձի հեծցուցած տանելու ատեն տեղւոյն տաճիկները կուգան և եհնիչելու թեմէ մնացած ձիւն անուամբ տուրք մը կը պահանջեն , գիւղացին տալ չուզէր , տաճիկները կը բռնանան և մէջերնին կուս մ'ըլլալով , գլուխ ալ կը պատռէ , գիւղացին կուգայ նոր ժողովին կը բողոքէ , բայց ըող չըլլար : Գարձեալ ասկէ ամիս մը առաջ Քիչվան գիւղի եկեղեցւոյ մէջ քանի մը տաճիկ գողութիւն ընելով , Առաջնորդ հայրը որ այն ատեն հոս կը գտնուէր , թագրիւր կը գրէ տեղական կառավարութեան և դողերը բանտարկելու ստի : Առաջնորդին մեկնելէն վերջը տարածայնութիւն ելաւ թէ դողերը պիտի արձակուին . գիւղացին ահուգողի մէջ է . ո՞վ գիտէ ինչ արկած պիտի բերեն գլուխին , եթէ արձակուին :

« Արդ ինչ կրնայ ընել խեղճ գիւղացին . հարկաւ չը պիտի ճանչնայ , և ինչպէս ճանչնայ իւր տեղապահը , քանի որ նորա բարուց վրայ տեղեկութիւն ունի , որ իւր կղեր ընկերը մեռցուներու համար երեք սովի խոստացած էր թիւրտի մը (1) . վերջապէս քիւրտը օր մը խոստովանեցաւ զայս քանի մը մարդոց առջև : Ահա՛ այսպիսի անձ մը տեղապահ կը կարգուի առանց Պատրիարքարանի գլխութեան , որմէ գիւղին և հեշտ է մակարերել թէ այսուհետև ինչ պիտի ըլլայ Երզնկայի վիճակը . 8-9000 ժողովուրդը ինչ պիտի քաշեն ասոր ձեռքէն . Պատրիարքարանի ուշագրութիւնը պէտք է այս խնդրոյն մէջ . բայց Պատրիարքարանն ալ կը լսէ՞ դաւառացւոյն ցաւերուն . Աստուած գիտէ : ուրեմն սպասենք համբերե՛նք որ երկինք գլխուն այս տառապեալ ժողովրդեան վրայ » :

Պատրիարքայէն

« Ամսոյս 14 ին տեղւոյս Ազգ . դըպրոցի Տ . դասատու Պ . Մամբրէ բըղնուին քաղաքիս երկտասարդութեան հետ կատարեց վարդանանց զորակարաց տօնախմբութեան հանգէսը խիստ շքեղ կերպով :

« Նոյն օրը Արթ . Արիստակէս վարդապետ Տ . Սարգսեանց Սուրբ պատարագ մատոյց և հանդիսին նախագահեց . նախ հոգեհանգիստը կատարուեցաւ որմէ ետքը երգեցիկ մանկունք սրտաշարժ կերպով երգեցին նորահրաջ շարականը , ապա կարդացին քանի մը հայրենասիրական ճառեր . Ա . Պ . Բընուսին , Բ . Պ . Արարահամ Տ . Գալուսեան , Գ . Պ . Սիմօն հրաշխայ Տ . Գեորգեան , Գ . Պ . Միհրան Մ . Գրիգորեան . այս ամէն ճառերուն սկիզբները ու վերջերը ազգային երգեր կերգուէին խիստ սքեւադրաւ և ներդաշնակաւոր ձայնով :

« Ապա Նորին Արժանապատուութիւնը իր վառվռուն ազգասիրութեամբ մի սրտաշարժ ատենաբանութեամբ օրհնեց ժողովուրդը , և գոցեց հանգէսը :

(1) Ասի անհատաւոր կը թուի մեզ : Ծ . Խ .

« Առաջին անգամն էր որ այս օրինակ հանգէս մը տեղի ունեցաւ մեր քաղաքի մէջ , թէպէտ ժողովուրդը սառի կերպով նայեցաւ մեր երկտասարդաց այս ձեռնարկին վրայ՝ սակայն մեծայոյս եմ որ անոնք ալ վերջապէս կ'օգտուին իրենց անտարբերութենէ , և օր մը հայրենասիրական խանդով վառուած կ'զգան ուսման ազգասիրութեան պէտքը , և կըլլան իրենց հայրենեաց և մարդկութեան պիտանի անդամներ » :

Շատ անգամ կը գանգատինք թէ Ազգին մէջ բանիբուն և դորձունեայ առաջնորդներ չկան . միւս կողմէն ալ բանիբուն առաջնորդները անխընայ կը հարուածենք փոխանակ զանոնք քաջալերելու . ասա՛ այս կարգէն է Նիկիովիդիոյ փոխ-առաջնորդ արժ . Տ . Ստեփան վարդապետը որոյ գործունէութեան և անշահախնդրութեան բողոք վիճակայինք կը վկայեն , ի բայ տուեալ քանի մը կարծածիս և խառնութեամբ սընանող անձինք , որոնք կէտ նպատակի ըրած են ազգասէր առաջնորդները հարուածել , Ազգին բարերարները ձաղկել և երախտաւոր վարժապետները առակ նշաւակի ընել :

Այսպիսեաց սրժանաւոր պատասխան մը կրնայ համարուիլ հետեւեալ յօդուածը որ Պաղտէճիկէն խրկուած է մեզ :

... Խորագիրը

Փունջ լրագրոյ 1062 թուոյն մէջ , Պարտիզակէն գրեալ աստղանիշ ստորագրութեամբ մի նամակ կարդացի ընդդէմ Նիկիովիդիոյ և վիճակցին Առաջնորդական տեղապահ գեր . Ստեփաննոս վարդապետի : Արդարեւ՝ եթէ վստահ լինէի որ այն ավերացը ինչ և անալի գրութիւնը , յորմէ ոչինչ կիմացուէր գրեթէ , պարզամտաց ոմանց գայթակղութեան տեղի տուած չէ և եթէ փունջի մեծ խմբագիրն այս նամակին պարունակութեան մասին ի դիմաց Նորին Գերապատուութեան բարատուութիւն խնդրած չը լինէր , չէի բնաղջկանէր պատասխանել և արհամարհաւ լուութիւն կը պահէի , գիտնալով որ վատ կիրքեր միայն առաջնորդած են զինքը սոյն նամակը գըրելու :

Սոյն նամակը երկու ամբաստանութեանց ենթարկել կը կամէր զնորին գերապատուութիւնը :

Ա . - Իբր թէ Նորին գերապատուութիւնը հովուական այցելութիւն մը տալով առ հօտ իւր ի Եւալագտէրէ , տեղւոյն եկեղեցւոյ պատկերներէն մին պատուած և այրած լինի :

Բ . - Իբր թէ Նորին գերապատուութիւնը Պարտիզակ գիւղին նորընտիր թաղ . խորհրդոյ ընտրութիւնը բողոքովին Ազգ . օրինաց անհամաձայն կատարած , իւր՝ ընդ երեւելիս գիւղին նայն ընտրութեան նկատմամբ ըրած որոշումն արհամարհելով միապետաբար գործած , իւր բերնէն յատենի եկեղեցւոյ հակասահմանադրական բառեր և խօսքեր թուացած ըլլայ և թէ գիւղիս երեւելիք գեր . Հօր սոյն հակասահմանադրական ընթացից դէմ բազմաստորագիր (...) հանրադիր մը ուղղած լինելով առ Քաղ . պատ . ժողովն Նիկիովիդիոյ , Նորին գերապատուութիւնը ի դատ

և ի բացատրութիւն հրաւիրուած և բացատրութիւն տալէ քիստուստ տրուած լինի :

Սոյն առաջին ամբաստանութեան պարագայներն մեղ անձանք լինելով և այդ մասին որ և է տեղեկութիւն չունենալով, չեմք գիտեր թէ Նորին գերապատուութիւնն այդպիսի գայթակղական գործի մը տեղի տուած է, թէ ո՛չ. և կամ, յոյր զօրութիւնն ապաստան ըրած է զայդ: Սակայն սա միայն կատարած ան այդ որ՝ գեր. Ստեփաննոս վարդապետ ժողովրդեան կրօնական զգացումներն վերաբերելու մէջ և նորա գայթակղութեան տեղի չի տալու մասին այնքան զգուշ է և այնքան խոհեմ և այս մասին այնքան յայտնի փորձեր տուած է, որ իրաւունք կուտան մեզ հաւատար թէ, նա առանց օրինական միջոցներու դիմած լինելու, այսինքն բարձրագոյն իշխանութեան մը խորհուրդ չէ հարցուցած և կամ ժողովրդեան հաւանութիւնն չընդունած, յայնուհետեւ այդպէս պատկեր պատահելու չեղէր: Գարով երկրորդ ամբաստանութեան, Պ. նամակագիրը կուզէ չարաչար ստել, զի գեր. Ստեփաննոս վարդապետ, ըստ որում Ազգ. օրինաց ճշդիւ գործադրմանն փափագող պաշտօնեայ մը, բնաւ Ազգ. օրինաց հակառակ վարուած չէ և մարդ վատ մը լինելու է, որ սոյն ընտրութեան վրայ խօսելով, հակասահմանադրականութեան և միապետականութեան տիպոսներն վերքնծայէ նմա :

Ուստի կուղղեմք զայս, Պարտիզակի թաղ խորհրդոյ ընտրութեան հետևեալ համաձայն նկարագիրն դնելով աստ և կը սիրեմք յուսալ որ գայթակղեալ մտքերն, եթէ երբէք կան, կը վերաշինուին :

Գեր. Ստեփաննոս վարդապետ յայց ել ի Պարտիզակ ի 12 դեկտեմբերի: Նորին Հայրութիւնը նկատելով որ զիւրիս տանն ամենայ թաղ խորհուրդն ցրուեալ և անկերպարան վիճակի մը ենթարկեալ է և տասն ամսոց մէջ օրինաւոր նիստ մը և արձանագրութիւն մը ունեցած չէ, շանաց յորդորել զայն, որ այլևայլ պատճառանօք իւր մէջ մուտ գտած անհամաձայնութեան վերջ տալով, միանայ դարձեալ և սիրով գործէ յօղուտ Ազգին: Այլ սակայն գեր. Հայրն անանկով որ ամեն ջանք ապարդիւն պիտի լինի և նկատելով որ զայն համահայնեցնել ուղիւ ժամանակի կորուստէ զատ, ոչ այլ ինչ արդիւնք յառաջ պիտի ածէ, նոր ընտրութեան եղանակին վրայ խորհրդակցելու համար, զիւրին յառաջակայնեքէն 80ի չափ անձինք ի ժողով հրաւիրեց և զեկուցանելով նոցա նոյն թաղ խորհուրդը համահայնեցնելու անհնարութիւնը, նոր ընտրութեան մասին նոցա կարծիքն հարցուց :

Սոյն խառն ժողովը անհամաձայնութեան գլխաւոր պատճառ նը կատարելով թաղ խորհրդոյ երեք անդամներն, դառնապէս բողոքեց և պահանջեց որ սոքա ընտրելուց ցանկին մէջ չի գրուին: Սակայն Գեր. Հայրն այս պահանջման Սահմանադրութեան օգուտն բոլորովին հակառակ լինելն յայտնելով և միւս կողմանէ տեսնելով որ ժողովը խիստ յուզեալ է, գործն ցաւալի հետեւ

ուրեքն մը չը յանգեցնելու համար, սկսաւ յորդորել թաղ խորհրդոյ Պատ. անդամներն, որ յանուն խաղաղատիրութեան բողոքն ի միասին իրենց վերընտրելութեան իրաւունքն զօհելով հաճին ընտրելուց ցանկէն դուրս մնալ:

Թաղ խորհրդոյ ինն անդամք լըսելով Գեր. Հօր յորդորանաց հաճութեամբ զօհեցին իրենց վերընտրելութեան իրաւունքը յանուն խաղաղատիրութեան. իսկ սոյն երեքն, թերևս իրենց անուններն ընտրելուց ցանկին մէջ չի գտնուած առնէն ըստ ստանալու մէջ անհնարութիւնն նշմարելով յանձն չառին զայս և դուրս ելան:

Այս որոշումն առժամայն Նորին գերապատուութիւնը արձանագրել և անդ ներկայ 80 ի չափ անձանց ստորագրել տալէ յետոյ, նոյնք յատենի Եկեղեցւոյ ծանոյց ժողովրդեան և յորդորեց զիրենք որ իրենց քուէներն, խելացի, ազգասէր, եկեղեցասէր և դպրոցասէր անձանց տան, չէ թէ իրենց անձն և կիրքը ազգէ, եկեղեցիէ և դպրոցէ գեր ի վերոյ ընդունող անձանց:

Հուսկ ապա Գեր. հայրը ընտրողական ժողով կազմելով ընտրական գործին ձեռնարկեց և ըստ օրինի ընտրողաց և ընտրելուց կրկին ցանկերն պատրաստելէ զինի, յատուկ թուղթերով հրաւիրեց ժողովուրդն դալ իւր քուէն տալ:

Կիրակէ օրն քուէարկութիւնն սկսաւ և սրովհետև ընտրողաց թիւն էր 1044 և քուէարկուաց թիւն 529ի հասած լինելով կէսէն անցած կհամարուէր, նորին գերապատուութիւնն քուէհամարի գործողութեան սկսելով սուսն ժողովրդեան բացակներեալ քուէտուրն և թուեց քուէթուղթերն, որոց մէջ մէկ քուէթուղթ աւելի տեսնուեցաւ, (Պ. նամակագիրն երկու ալ տուիտ դնելով անուանց իւրաքանչիւրը մէկ քուէթուղթ թուած լինելու է, որ կասէ թէ՝ քուէարկուաց թիւնն 14 քուէ թուղթ աւելի ելաւ սուսնէն) զոր նշանակելէ յետոյ, սկսաւ քուէհամարն կատարել: Բայց որովհետև քուէհամարն՝ երեք դրասեղաններու բաժանեալ լինելով հանդերձ, իւր կիսոյն չը հասած երեկոյն վրայ հասաւ, Նորին գերապատուութիւնը հակառակ սահմանադրութեան հրահանգաց (1) որ քուէարկութեան և քուէհամարն մի և նոյն առուր մէջ ընել կը տրամադրեն, հարկադրեցաւ երկրորդ առուր թողուլ զայն, որոյ վասն քուէհամարի թուղթերն քուէթղթոց հետ ի միասին քուէտուրն մէջ դնելով կներցը զայն և եկեղեցւոյ դանձատունն դրաւ, և ապա կրկին երկրորդ օրը քուէտուրն առաջի ժողովրդեան բանալով՝ շարունակեց և ի գլուխ հանեց քուէհամարն և ի միջի եկեղեցւոյ այրելով բոլոր քուէթուղթերն, գրագր

1. Սահմանադրութեան հրահանգաց Մեծ. հեղինակը մեղ թուի թէ, զուգորութիւն միայն ենթադրելով այսինքն ձմրան կարճ և ամրան երկայն առուր մէջ առանց երբէք տարբերութիւն դնելու, որոշած են քուէարկութիւնն և քուէհամարն առ օրին կատարել և առ օրին վերջացնել:

Յուսմք թէ, լաւ կը լինի, եթէ այս ալ Սահմանադրութեան վերաբնեւել խընդրոց կարգն դասուի:

բաց և քննչաց ստորագրել տուաւ. քուէհամարներն և ել. Ս. Առաջնորդ տրան: Նոյն երեկոյն հրաւիրելով քուէկց առաւելութեան ստացող անձինք և ուրոյն ուրոյն զեկուցանելով՝ ժողովրդեան զիրենք թաղ խորհրդոյ անդամ ընտրած լինելն, աղբու բանիւք յորդորեց և քաջալերեց զիրենք աշխատել ի շինութեան Ազգին և հայրենեաց, ի պայծառութիւն եկեղեցւոյ և ի յառաջադիմութեան վարժարանաց, որոյ ի փոխարէն նորնտիր Պատ. թաղ խորհուրդն չնորհակալութիւն յայտնելով ժողովրդեան իր վրայ ունեցած վստահութեան և Նորին գերապատուութեան քրոնաթոր վաստակոց և տքնութեանց համար, խոստացաւ ջանք չը խնայել ի բարին և յօգտակարն:

Մնացածը հու անգամ:

Բաղիչէն հետևեալ հեռագիրը ստացանք երէկ որ տեղոյն առաջնորդի փոխանորդին և Քաղ. ժողովոյ ատենապետին ստորագրութիւնը կը կրէ, և որ դառն դանգատ մ'է ընդդէմ խաչ Մանուկեան Աւետիսէֆէնտի վերջին օրերս գործած ապօրինի ընթացից:

Միայն Մանուկեան Աւետիս օն պէչ սէնտէն պէրու աղա օլուպ, էհայի հագգընտա էնվաը թէատտի իթտիկի տէֆաթլա Բաթթի. թիւանէյէ պլիտիլիլիլիլի սիր. Ֆէհմանը ալի հիւ. քմիւնճէ՝ միւնթէլիպլէր (ընտրողք) թայլին օլունտուգտա, մէրգուլը լէյ դաղանմատըլընտան՝ թէալլիւգաթլարընտան պիր թագըմընըն զիհիսի ճէլպ իսէրէք, միլէթ պէյիսէ չիտաէլիլ միւնաղալար վուգուա կէթիլիլիլիլիլի սէպէպ օլուլ. մէրգուլ աղալըգտան մէն օլունմաղա քեաֆֆէյի միլէթ զայ վէ միլէթ նիղամամէսի իպլթալ օլաճաղը իֆատէսիլլէ, սէրլիյան իճրապընա հիմմէթ պոլլորլմալարը:

Մէճլիսի ճիսմանի իլէյիսի 6 մարտ 1876 Գեղեթք Վէ. քիլի միլէթ իլիմէնի թիպլիսի Մուշէ:

... Խմբագիր Տէր. Կարծես բնական է Հայաստանի դուստրուտն որ իրենց կեանքը պանդխտութեան մէջ անցընեն, անողորմ բողոք կը բաժնէ իւր սիրելի հայրենիքն և կը դատարարէ մինչև վերջը այս դառն լուծին տակը հեծելու...

Արդեօք ե՞րբ պիտի վերջանայ այս եպարելի սովորութիւնը Հայաստանի մէջէն, Հայաստանի դուստրուտն ինչո՞ւ իրենց հայրենեաց ծոցը չպիտի մնան՝ ուր կը թողուն իրենց ծնողը և ազգակիները արտասուուաց գետակներուն մէջ ու կը հեռանան օտարութեան մէջ անցընելու իրենց ծաղիկ հասակը: Արդեօք պիտի ըլլայ ժամանակ մը որ վերջանար այս քիտուր յիշատակները Հայաստանի դուստրուտն սրտին մէջէն և թօթափէին պանդխտութեան այն դառն լուծը՝ որ խիստ ծանր է կրել. ո՞վ պիտի խորհի ասոր դարմանը, երկինք... Ես ալ որ ակամայից ենթակայ եղեր եմ պանդխտութեան լուծին տակ մտնել հայրենեաց տիրուր բայց սիրելի յիշատակները միտքս դալով հետեւեալ ոտանաւորս Ձեր պատուական թերթին մէջ հրատարակելու կը խնդրեմ կանխաւ մատուցանելով մեր յարգանքը հաւաստին:

Որով մնամ անձուրէր ձեզ Մամթիա Մ. Կ. Գոռլուսմեան 8 մարտ 1875

ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆ

Բաղդն անողորմ հեռացուց զիս հայրենիքէն սիրելի ճալով թախիծ և տխրութեան անմխիթար իմ սրտի Հէրիք սեպեց ինձ ապրելու իմ հայրենի աստեղց տակ Հալածեց զիս տապաւելու օտար կապոյտ երկնից տակ ջօր մը ծերուկ քեռ մը թշուառ ո՛հ զրկեքէն խանդակաթ Ձրկեց նա զիս սիրտ ի տրոփ աչք յարտասուս անընդհատ Թողուց զանոնք ի լիճս վշտաց անսփոփ անմխիթար Բաժին տալով ողբալ, կոծել եւ արտասուել անդադար: Երկայիս ինձ կեանք տուող և զով ձակտիս այն գեղիւնը Որոյ հեղիկ և մեղմ շնչամբ բուրում ծաղկանց մշտասփիւռ Վճիտ առուակ, յստակ ջրեր դաշտ ու պարտէզ այս ամեն նա չըթաց ինձ եղկելոյս խեց զանոնք փոյթ յինէն: Ծառոց ի ճիւղս ճվճվացող հայէկիւճընձ զուկ և սխալ Որոյ ձայնիկ քաղցրակարկալ տխուր սրտիս սփոփանք Վարդ Մանիշակ՝ Եւուան Նարկէս, Յասմիկ, Քրքում, Նուրուֆար Առաւ զանոնք՝ փոխան անոնց՝ տալով ցաւեր անհամար: Ձի՛նչ արդ բաժին՝ յայսմհետէ ինձ պէս թշուառ պանդխտին Որ թափառի աստանդական իր և զբուլալազին Որք անտերուկ, ձեռքերն ի ծոց, սրտիկն ի խոց աչքն ի ւաց Որ հառաչէ խղճուկ ի ձայն յաղաղըս իւր սիրելեաց:

ՀՐԱՒԻՐ ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՍ

Ազգային ժողովը նիստ ունի յանալիկայ ուրբաթ, Մարտ 12 ի Ղալաթիա: Ատենը պիտի բացուի ճիշդ ժամը 6 ին և դոցուի 10 ին: Հրաւիրեալ են Երեսփոխան Էֆէնտիները՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ: 1876 Մարտ 6 Պարտիզակի Գեր. Ստեփաննոս Ար. Գոռլուսմեան ՕՐԱԿԱՐԳ Ա. Մնացորդ տեղեկագիրք քըննելի յանձնաժողովոյ ի վերայ առաջարկութեանց Ս. Պատրիարք Հօր. 1. Խնդիր կաթողիկոսութեան Աղթամարայ 2. Խնդիր կաթողիկոսութեան Սոյոյ 3. Խնդիր Մուրատեան վարժար: 4. Խնդիր Սահմ. պատասխանատուութեան Ս. Պատրիարք Հօր. 5. Խնդիր Եկեղեցականաց և դաստուարաց. Բ. Վերաքննութիւն Սահմանադրութեան. - Գլուխ թաղական մատակարարութեան:

Ատենադպիր Հ. Ս. Ալեքանյան

Ա Ձ Դ

Տխարպէքերէն Տ. Գարբիէլեան Պօղոս էֆէնտի անուն աղբային մը լըրագրոյս բաժանորդը գրուելով, նոյնէն օրինակ մը ամէն շաբթու իրեն խրկուին խնդրած է :

Գաւառներէն շատեր իրենց բաժանորդագիրը կանոնաւորապէս չը վճարելով և ոմանք ալ կոկորդնին անցընելով, ցաւօք սրտի կը պարտաւորիմք ծանուցանել որ առանց տարեկանը կանխիկ ընդունելու ո և է տեղ մը թերթ խրկել անկարելի է մեզ :

... Խմբագիր, հետեւեալ նամակը պատուական լրագրոյդ մէջ հրատարակել կը խնդրուի :

Հ Ր Ա Ի Լ Ր Գ

Մեծապատիւ Ընկեր

Ընկերութեան ընդհ. ժողովոյն Ձեր Մեծապատուութիւնը երեսփոխան ընտրած ըլլալը ասկից առաջ կրկին հրաւիրագրով իմացուցած եմ :

Այս անգամ կը խնդրեմ որ առանց զանցառութեան յառաջիկայ կիրակէ մարտ 14 ճիշդ ժամը վեցին ներկայ գտնուել բարեհաճիք ի Սուրբ Սահակեան վարժարան Սամաթիոյ :

Ուստի քաջայոյս եմ Ձեր ընկերակցութեան ներկայութեան 10րդ. յօդուածը յիշելով չէք զլանար սոյն Գ. հրաւիրագրոյս անսալ :

Մնամ յարգանքօք
Ի դիմաց Հ. Հ. Գործ. Ընկ.
Ընդհ. ժողովոյ
ԱՏԵՆԱՊԵՏ
Հ. Մեղուեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ օր Ռուսաց դեսպան Իկնաթիէզ զորպետ վեհ. Սուլթանին ներկայանալով, երկու գիր յանձնեց Ն. Կ. վեհապառուութեան, որոց մին Այէքսանդր կայսեր որդւոյն վլատմիր մեծ դուքսին և միւսը Այէքսանդր կայսեր եղբոր Միշէլ դուքսին մէյմէզի զաւակ ծնիլը կը ծանուցանէր :

Արտաքին գործոց պաշտօնեայ վսեմ Բաշիտ փաշա շաբաթ իրիկուն փառաւոր կոչուենք մը տուաւ, ուր ներկայ կը գտնուէին բարձր. մեծ Եպարդոսը, գանձուց պաշտօնեան, Ռուսիոյ, Գաղղիոյ, Պարսից և Հելլենաց դեսպանները, Միւնիք էֆէնտի, Յովհաննէս էֆէնտի, Անդղիոյ դեսպանատան առաջին քարտուղարը և այլ դեսպանաց թարգմանները :

Կոչուենքն վերջը վառաւոր երկու կոյժ մ'ալ տրուեցաւ :

Պետական խորդոյ նախկին նախագահ բարձր. փեամիլ փաշա, կայսերական հրամանաւ բարձրագոյն ժողովոյն նախագահ անուանեցաւ :

Փեամիլ փաշա կիրակի օր վեհ. Սուլթանին ներկայանալով, իր շնորհակալութիւնները մատուց և նոյն օրը նախարարաց ժողովին ներկայ գտնուեցաւ :

— Վէլի փաշա Հէրսէքի մէկ զօ-

րագունդին հրամանատար անուանելով, այս շաբթու իւր պաշտօնատեղին կերթայ :

— Կիրասոնէն և Տրապիզոնէն Ռէտիֆ զօրաց չորս գունդ հաւաքուելով, Տրապիզոնի մէջ զինուորական կրթութեան կը պարապին : Ասոնք քանի մը օրէն Պօլիս պիտի գան :

— Անդրիանուպօլսոյ բանակին հրամանատար Ահմէտ վահիտ փաշա պատերազմական գործոց նախարարին հրամանաւ նիշ ուղևորեր է, իր հետն ունենալով երկուկայի Ռէտիֆ զօրաց գունդը որ Անդրիանուպօլս կը գտնուէր :

— Անդրիանուպօլսոյ նախկին կառավարիչ Էօմէր Ֆէյզիլ փաշա կիրակի օր մայրաքաղաքս հասաւ :

— Շխախտի մենալաճառութեան նախկին մուհասէպիճի Մազհար պէյ Պաղտատի մարադասան տընօրէն անուանեցաւ :

— Հեռագրաց և թղթատարութեանց վերատեսուչ վսեմ. Եսալէր փաշա քանի մը օրէն Եւրոպա կերթայ Տաճկաստանի, Աւստրո-Հունգարիոյ, Գաղղիոյ և Ռուսիոյ մէջ դաշնագրութիւն մը կնքելու համար :

— Կայսերական հրովարտակա Մարաշի գաւառին Աքիւր-Տաղի մէջ առևտրական տնտեսական մը հաստատուեցաւ, որ տարին միանգամ այսինքն յունիս 7/19 ին պիտի բացուի և 7 օր պիտի տևէ :

— Գօնեայի գաւառէն փետրվար ամսոյ մէջ 1,267,064 զըշ. խրկուեր է արքունի գանձը :

Մանասթըրի գաւառէն ալ 2,434,369 զըշ գանձուելով, Հէրսէքի կայսերական գործածութեան յատկացուեր է :

— Պօսնայի փոխ-կառավարինքը րուն մէջ քանի մը փոփոխութիւնք եղան :

Փէրիտօրի փոխ-կառավարիչ Էմին էֆէնտի թէշինայի փոխ-կառավարիչ, Հասան պէյ Նեվզիլի փոխ-կառավարիչ, Տէրպէնտի փոխ-կառավարիչ Շեվքի պէյ փէրիտօրի փոխ-կառավարիչ անուանեցան :

— Մանասթըրի կայսերական բանակին գնդապետ Թահիր փաշա Էրզրումի բանակին գնդապետ անուանեցաւ : Սօֆիայի զինուորական գընդին հրամանատար Մէհմէտ փաշա Մանասթըրի բանակին գնդապետ անուանեցաւ :

— Ատարազարի գայմադամ Ռիզա պէյ պաշտօնանկ ըլլալով, Պիլէճիքի միւտիք Ձիւհտի պէյ անոր յաջորդեց :

Իզմիտի Միւթէսարիֆը այս օրերս Ատարազար կը գտնուի իր հետն ունենալով Պաղէճիկէն Միւրեան Սարգիս էֆէնտի :

— Ուրբաթ իրիկուն խոտիղիւղի շոգենաւը նաւամատոյցին մերձեցաւ առան երբայցի մը ծովը ինկեր է : Բայց ողջ առողջ դուրս հաներ են :

— Սէլանիկէն կը գրեն, կըսէ Լաթիւրբի, թէ տեղւոյն կառավարական անտառաց տեսուչ Վիլթօր էֆէնտի ատրճանակի հարուածով ինքզինքն սպանելու ուղեւոր առան վրայ հասեր և աղատեր են : Ընդունած վէրքը թիթեկ եղեր է : Սոյն անձնապատուութեան փորձին պատճառը յայտնի չէ :

— Անդղիոյ Թանքըրվիլ կոմսը իւր ընտանեաց հետ ամսոյս 22ին Քանտիա հասեր է : Այս մարտը 1867ի Արուեստահագիայի միջոցին վեհ. Սուլթանին Լանտրա պոլիտեմ առան Անոր յատկացեալ պարագը այլ և այլ գրուագներով զարգարեր է : Այս երևելի արուեստաւորը Արևելք ալ ճամբորդութիւն մը պիտի ընէ :

— Անցեալ չորեքշաբթի օր արքունի թնդանօթարանը շինուած թնդանօթներու փորձ մ'ըրեր են Ձընարը չէմէ և յաջող դատեր են :

— Մանասթըրի մէջ հողագործական սնտուկներ հաստատուելու համար մանածոող մը կազմուեր է :

— Քամակեան քերց սպանման պատճառաւ բանտարկեալ հաճի Վասիլի իրիկուն մը քովը գտնուած կապի կանթեղը գետինը կը ձգէ, որպէս զի այս պատճառաւ աղմուկ ելնելով, ինքն ալ կարենայ փախչել : Սակայն ստիկանաց հսկողութենէն չը վրիպելով, անմիջապէս կը վազեն և կանթեղը կը մարեն : Հետեւաբար հաճի Վասիլի բանտը մնալու կը պարտաւորի :

— Անդղիական Պիթէրն անուն պատերազմական նաւը Սէլանիկի և Մօն-Թաթօսի նաւահանգիստները պարտելու համար փրէնօս գնաց, անկէ ալ օսմանեան Արշակապետի նաւամատոյցները աչքէ պիտի անցնէ :

— Աստուածաբանական գիտութեան ուսանող Ահմէտ էֆէնտի անուն մէկը անցեալ օր Սիւլէյմանիէի հրապարակը պտտելու առան, Օսման անունով մէկը վրան կը յարձակի և քսակը ձեռքէն կը խլէ : Ահմէտ էֆէնտի գողութիւնը տեսնելով, ստիկաններ կը կանչէ, որոնք անմիջապէս հասնելով քսակը գողին ձեռքէն կառնուն և զայն բանտ կը տանին : Արգէն այս մարտը ուրիշ անգամ գողութեան և ուրիշ յանցանք բըռնուած և դատապարտութիւն կրած է եղեր :

ԸՆԹԱՅԻ ԴԻՄՄՈՅ

9 Մարտեքըշաբթի

Անգղ. լրաց	զուրուշ	144,
Նաբօլէոն ոսկի		88,20
Իմպերիալ ոսու		90,
Գըբըմից		54,20
Ֆրանք		
Սօֆօրին		152,
ձերմակ մէճիտի տարբերութիւն		3,
Հինգոց տարբերութիւն		5,20
Գարպօն արծաթ		
» թղթադամ		
Պղինձ		138,10

Ա Ձ Դ

Մեր գաւառաբնակ գործակալներէն մէկ երկու հոգի լրագրոյս բաժանորդագիրները կոկորդնին անցուցած ըլլալով, կը հրաւիրեմք այնպիսիները գրամներն առ մեզ խրկելու : Եթէ ոչ պիտի պարտաւորիմք անուննին մի ըստ միովէ հրատարակելու :

ՏՕԹՈՐ ՓԱՓԱՋԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ պատրաստ է իրեն դիմող հիւանդները դարմանել, ամէն երեքշաբթի և շաբաթ, ժամը 8-10 Սուլթան Ահմէտ տիվան ետլու Մ. Ժօրթ Կաննիլի-Գիտիսի դեղարանը թիւ 128:

Ա Ձ Դ

ՌԻՄՍԱՍԱՄԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՈՐՍՆՈՒԹԵԱՆ

Ա. Տըպէյ գաղղիացի հեղինակին «ՌԻՄՍԱՍԱՄԻՐՈՒԹԻՒՆ ԱՍՈՐՍՆՈՒԹԻՒՆ» անուն գործը, որ երկար ամիսներ է վեր թարգմանած ըլլալով, տպագրութեան տալու համար պատեհ առթի մը կըստատէի, վերջապէս, ամուսնութեան խնդրոյն թէ գրական հրապարակին վրայ, և թէ ամեն տեղ կարեորութիւն ստանալը տեսնելով, համարձակեցայ յանձնել տպագրութեան, որուն առաջին թերթը տպագրուեցաւ և հետըզհետէ ալ պիտի տպագրուին, այնպէս որ 350 երեսներէ բաղկանալիք այս գործը կարճ միջոցի մը մէջ աւարտուի :

Բայց տպագրութեան ծանր ծախքը սակաւ ինչ թեթեւցնելու նպատակաւ, բաժանորդագրութեան մ'ալ ձեռնարկած եմք, վստահ ըլլալով որ դարասէր աղբայինք այս մասին իրենց օժանդակութիւնը չպիտի զլանան մեզ :

Մէկ օրինակին բաժանորդագիրն է երեք քանթ մէճիտ : Բաժանորդագրութեան տեղն է Կ. Պօլիս, Ռիզա-Փաշա խան Սամաէլ էֆէնտի Պարտիզպանեանի տպարանը :

1876 փետրվար 26

Մէլիքի Ս. Քաթաբեան

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ՊԱՍԱՊՅՈՒՅՑ

Ա.Ձ. ՊԱՍՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Սկսեալ է Հոյն-Պէլ Էրմուշան Գիտարանի Աւերուսիոնց Միքայիլ Չուլտան կեդրոնատեղին է Չարդարեան գործարան Սուլթան Համամ թիւ 14 և բոլոր Հայ դրամաճառաց ըով. գին 5 զըշ :

Դպրոցաց համար բուն գինէն աւելի զեղչ կըլլայ :

Է.Լիճ Պի. ՃԷՏԻՏ

գրեաց

Մ Կըթիւ Կիւլեան

Տաճկերէնի պրոբրէիւր ուսանիլ ուղղորդելու համար դիրուսոյց քերական մ'է :

Կը ծախուի Սրապեան Պաղտատար աղայի խանութը. գին 100 վըլ :

ՊԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԻՆ

ՆԱՄԱԿԵՐ, ԵՐԳԵՐ, ԱՌԱՅՆԵՐ

ԱՌՆԵՎՇՈՒԱՅՆԵՐ

Գրեց

Արիստակէս վարդապետ Տ. Սարգսեց

Սոյն գիրքը որուն մէջ կը պարունակին վասպուրական աշխարհի երգերը, վանայ բարբառով նամակներ և հանելուկներ, պանդուխտ աղբայնոց և բանասիրաց ուշադրութեանը արժանի է :

Գինն է մէկ քառորդ արծաթ մէճիտ : կը ծախուի Մէրճան Պաղտատար աղայի խանութը և ուրիշ տեղեր :

ՏԵՕ-ԽՄԻ.

ՏԵՐ

Մ. Թ. ՄԵԼԻՔԵԱՆ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

Րիզապաշա խան քիւ 3